Armenian Apostolic Church of Holy Resurrection Issue 2 - July 2015

# ՋՐԱԳ JRAK

ԾԽԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

PARISH NEWS

## MESSAGE OF FAITH

*" Cast all your anxiety on 'Him' because 'He' cares for you. 1 Peter 5: 7*

*Carrying your worries, stresses and daily struggles by your self shows that you have not trusted God fully with your life. Letting God have your anxieties through prayer calls for action. Don't submit to circumstances but to the Lord who controls circumstances.*

### Friday 19 June

Under the auspices of His Grace Bishop Haigazoun Najarian the Chatswood Parish Council in conjunction with the Armenian Church Ladies Auxiliary hosted a cocktail evening in appreciation of the combined church choirs who participated in the Holy Mass held at St Mary's Cathedral in the city to commemorate the 100th anniversary of the Armenian Genocide. An impressive 60 member choir took part and includes members from the three choirs:

- Loosavorich
- Vartanants
- Karsoun Mangounk Children's Choir

Everyone enjoyed the beautiful table full of delectable delights prepared by the ladies auxiliary and the church councillors' families. The evening was a great success enjoyed by all, thanks to everyone involved.



### All Armenian Church Youth Assembly in the Mother See

Over 100 Armenian youth representing countries from all over the world will meet to discuss the current issues and community practices concerning the Armenian youth at the Mother See of Holy Etchmiadzin from 1-5 July .



ACYA members, Vahag Vartan-Boghossian and Garren Pezikian who are representing the Diocese of Australia met with His Grace Bishop Haigazoun Najarian before their departure to Armenia receiving his blessing and well wishes for their participation.

### Friday 3 July

Thirty representatives from our parish cordially accepted an invitation of the NSW Jewish Board of Deputies to attend a Jewish Sabbath evening at North Shore Temple Emanuel. It was a great opportunity to experience Jewish culture and tradition and network with community, political and religious leaders.

### Tax System Explained to Our Syrian & Iraqi-Armenian Friends



As a Sponsoring Organisation, last Saturday the Armenian Apostolic Church organised an information session on the Australian taxation system to assist newly-arrived refugees. The session was facilitated by Chartered Accountant, Mr Raffi Zarzavatjian with contributions from Mrs Rita Barsamian-Patanian and was very-welled received by the 30 plus participants.

## COMING UP

### Sunday 12 July

The Feast of the Holy Transfiguration is one of the five principal feasts of the Armenian Church so named for Christ's luminous appearance to his three disciples - James, John, Peter - on Mount Tabor. In Armenia it is also known as *Vartavar* (the Festival of Roses) after the old pagan feast, which it replaced.

His Grace Bishop Haigazoun Najarian will celebrate an Episcopal Mass on this feast day.

### Friday 17 July

The annual gathering of the Church servants will take place with a dinner in the Edgarian Hall. Clergy, diaconate, choirs and members of the bodies who contribute to church life will share in this evening together by invitation of the Church Council.

### Sunday 16 August

Annual St Mary's Day Luncheon after Badarak at 1.00 p.m.

Come and join us at the Edgarian Hall for a delicious lunch prepared by our Ladies Auxiliary team to celebrate St Mary's Day.

Why not organise a table for your group of friends and enjoy a hot lunch and good cheer. This is a very popular event so book early, reservations are required.

For inquiries and tickets please contact the Church Office 94198056.

## Կիրակի 12 Յուլիս

Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Հոգեգալուստից հիսուն օր անց, Սուրբ Հոգու հրամանով և առաքյալների հավանությամբ, Պետրոս առաքյալը Հակոբոս Տյառնեղբորը ձեռնադրեց Երուսաղեմի առաջին եպիսկոպոս և քահանայապետ: Մինչ այդ օրն առաքյալները չգիտեին նոր քահանայության մասին և հնով էին վարում, իսկ այդ օրը Սուրբ Հոգուց հրաման ստացան փոխել ղևտական քահանայությունը քրիստոնեական քահանայությամբ, քանզի մինչ այդ օրը Քրիստոսի Մարմինն ու Արյունը չէր պատարագվում: Այս տոնը Վարդավառ կոչում է, Տիրոջը վարդի հետ համեմատելու պատճառով: Ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում՝ նախքան բացվելը, այդպես էլ Տերը նախքան Իր պայծառակերպվելը պահում էր Իր մեջ Աստվածության պայծառությունը: Եվ ինչպես վարդը բացվելով բոլորին հայտնապես երևում է, այդպես էլ մեր Տերն այսօր պայծառակերպվելով հայտնում է Իր Աստվածությունը:

Վարդը փշերի մեջ է բուսնում, այդպես էլ մեր տերը հրեաների մեջ երևաց, ովքեր էլ խաչեցին Նրան: Վարդն անուշահոտություն է բուրում, այդպես էլ մեր Տիրոջ պայծառակերպությունից անուշահոտություն բուրեց, որից աշակերտները թմրելով ընկան խոր քնի մեջ: Իսկ նախնիներն այդ տոնը Վարդավառ անվանեցին, որովհետև վարդը քանի դեռ կոկոն է, ո՛չ իր գեղեցկությունը և ո՛չ էլ իր անուշահոտությունն է հայտնում, իսկ ժամանակի լրանալուն պես քաղցրությունից շարժվելով փթթում է և իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Այդպես էլ Քրիստոս կուսական արգանդում սնվեց ու զարգացավ ինչպես կոկոն և ապա ծնվելով՝ աստղերով ու հրեշտակներով հայտնվեց մոգերին ու հովիվներին, իսկ հասնելով կատարյալ հասակին՝ հայտնվեց մարդկանց՝ նշաններով ու սքանչելիքներով: Տերը մարմնի վարագույրով ծածկվելով ինչպես կոկոն, այսօր բացվելով հայտնեց հայրենի փառքը, իսկ անուշահոտության բուրմունքով՝ Աստվածությունը:

### Ուրբաթ 17 Յուլիս

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը տարեկան գնահատանքի երեկոյ կազմակերպած է Եկեղեցւոյս կամաւոր ծառայող հաւատացեալներուն:

### Կիրակի 16 Օգոստոս

Սուրբ Աստուածածինի տարեկան ճաշկերոյթ, Եկեղեցւոյս Էնտկարեան սրահէն ներս՝
Տիկնանց Յանձնախումբի Կազմակերպութեամբ:

Մանրամասնութեանց համար հեռաձայնել Եկեղեցւոյս գրասենեակը՝ 9419 8056

### Ուրբաթ 19 Յունիս

Առաջնորդ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի հովանաւորութեամբ, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը եւ Տիկնանց Յանձնախումբը երախտագիտական երեկոյ մը կազմակերպեցին, ի գնահատանք Եկեղեցւոյս Քառասուն Մանկանց, Լուսաւորիչ եւ Վարդանանց երգչախումբերու անդամներուն: Որոնք իրենց մասնակցութիւնը բերին Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագին Սէյնթ Մէրիզ Տաճարին մէջ:

### Շաբաթ 27 Յունիս

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էնտկարեան սրահէն ներս, Աւստրալիական Տուրքի օրէնքներու բացատրական երեկոյ, վերջին տարուայ ընթացքին Աւստրալիա հաստատուած Սուրիահայ եւ Իրաքահայ ընտանիքներու համար: Երեկոյին հիւր դասախօսն էր Պր. Ռաֆֆի Զարզաւաթճեան: Շնորհակալական խօսք Ռաֆֆիին ինչպէս նաեւ Տիկ. Ռիթա Պարսամեան Բաթանեանին: Երեսուն ներկաներ գնահատեցին ներկայացուած բացատրութիւնն ու տեղեկութիւնը:

### Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Յուլիս 1-5 2015 աշխարհի զանազան երկիրներէ հարիւր երիտասարդներ պիտի մասնակցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի Համահայկական Եկեղեցական Երիտասարդաց Համագումարին: Սիտնիի Երիտասարդաց Մարմինի ներկայացուցիչներ՝ Վահագն Վարդան Պօղոսեան եւ Կարէն Բեգիկեան մաս պիտի կազմեն սոյն ժողովին Առաջնորդ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի օրհնութեամբ:

### Ուրբաթ 3 Յուլիս

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ 30 ներկայացուցիչ հաւատացեալներ ներկայ գտնուեցան, Նիւ Սաութ Ուէլզի Հրեական Խորհուրդի հրաւէր ընթրիքին Էմաննուէլ Տաճարի տարածքին: Հրաւէրի նպատակն էր՝ գաղութային եւ մշակութային փոխյարաբերութեան ամրապնդում: